

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتاک** جريدة يومية سياسية وأدبية - اليومة السؤلة، إيا قرويشيان

1500 Լ.Ո. 75ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԲ 259 (21309) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 20 ՅՈՒՆԻԱՐ 2003 10 ԷՁ

«ՔԱՅԻՏԱ»Ի ԱՆԴԱՄՆԵՐ

ԱԶԱՏՈՐԵՆ ԿԸ ՇՐՋԱԳԱՅԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՁ

ԼՈՆՏՈՆ, 19 (ԱՅՓ).- «Քայիտա» ցանցին գործակիցներ ապատորեն կը շրջագային Բրիտանիոյ մէջ, ուր անոնք թերեւս կ'օգտագործեն «ահաբեկչական հաստատուած խմբակներու» կարելիութիւնները, զգուշացուցած է Բրիտանիոյ ամէնէն բարձրաստիճան ոստիկանապետը, Կիրակի օր, առանց նշելու խնդրոյ առարկայ խմբակները:

Ճոն Սթիվընսը ըսած է, թէ կասկածելիներու մեծ թիւ մը հսկողութեան տակ է, եւ թէ «շարք մը անձեր» պիտի ձերբակալուին: Պատասխանելով հարցումի մը՝ ան յայտնած է, որ ձերբակալեալները կապ ունին «Քայիտա»ի հետ: Ան աւելցուցած է, որ ծանօթ է, թէ անոնք «պատրաստ են իրենց կեանքերը տալու»:

## ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ - ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԱԱՊՏԱՅԻ ՄԷՁ

Պատասխանի նախագահական պալատին մէջ երէկ երեկոյեան ժամը 6:00ին կայացաւ նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ հանդիպումը, որ առաջինն էր 21 Դեկտեմբերէն ի վեր:

Շուրջ մէկուկէս ժամուան հանդիպումին ընթացքին նախագահ Լահուտ եւ վարչապետ Հարիրի ընդհանուր խորհրդակցութիւններ ունեցան:

Յախագահ Լահուտ եւ վարչապետ Հարիրի ընդհանուր խորհրդակցութիւններ ունեցան իրարմիջեւ, որոնք կ'ամրապնդեն ներքին ազգային միասնականութիւնը եւ կը պաշտպանեն վանապան մարզերու մէջ իրագործուած նուաճումները:

Միասնական Լահուտ եւ վարչապետ Հարիրի ընդհանուր խորհրդակցութիւններ ունեցան իրարմիջեւ, որոնք կ'ամրապնդեն ներքին ազգային միասնականութիւնը եւ կը պաշտպանեն վանապան մարզերու մէջ իրագործուած նուաճումները:

## ՏԵՆՔԹԱՇ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ԳՐԱԺԱՐԻԼ

Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ շարաքովներէն յայտարարած է, թէ պիտի հրաժարի, եթէ խորհրդարանը որոշէ ընդունել Կիպրոսի համար ՄԱԿի վերամիացման ծրագիրին այն տարբերակը, որմէ ինք դժգոհ է:

Ան ըսած է, թէ կրնայ ՄԱԿի ծրագիրը մինչեւ Փետրուար 20 խորհրդարանին ներկայացնել, սակայն թէ ան մինչեւ այդ թուականը պիտի շարունակէ փորձել բանակցութեանց ճամբով փոփոխութիւններ ապահովել:

Ան շեշտած է, որ տակաւին հրաժարելու ծրագիրներ չունի, «տակաւին կատարելիք աշխատանք ունիմ», ըսած է ան:

Այս ամսուան սկիզբը, չորս 50 հազար թուրք կիպրացիներ՝ հիւսիսային Կիպրոսի բնակչութեան աւելի քան մէկ չորրորդը, հիւսիսային Նիկոսիոյ մէջ ցոյց մը կատարած էին ի նպատակ ծրագիրին պահանջելով Տենքթաշէն ընդունելու գայն, այլապէս՝ հրաժարի: (ԱՅՓ)

## ՌՈՒՍԻԱ ԿԸ ՎՍՏԱՀԵՑՆԷ

ՄՈՍԿՈՒԱ, 19 (ԱՅՓ).- Ռուսիա վստահեցուցած է Իսրայէլի, թէ կորիպային որեւէ կեդրոն կառուցելու նպատակ չունի Սուրիոյ մէջ, յայտնած է Իսրայէլի փոխ վարչապետ Նաթան Շարանսքի, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի հետ տեսակցութեան մը ետք:

Շարանսքի, որ Կիրակի օր արտած է Ռուսիա այցելութիւն մը, յայտնած է նաեւ, որ Իվանով յստակ դարձուցած է, թէ Մոսկուա չի ծրագրեր յարձակողական բնոյթի վէճք ծախելու Սուրիոյ:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան համացանցի կայքը երէք շարքի օր հարդրած էր, թէ կորիպային գործարաններու գծով համաձայնութիւն մը մշակուած է արդէն:

Աւելի ուշ, այդ տեղեկագիրը լեւու կոչուած էր. փոխարէնը այլ տեղեկագիր մը կ'ըսէր. թէ Սուրիոյ մէջ կորիպային ուժանիւթ գործարաններու կառուցման մասին համաձայնութիւն չկայ:

## ՊԱՂՏԱՏ ԿՐՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԸ ՎՏԱՆԳԸ ԸՆՈԱՑՆԵԼ՝ ՅԱԲԵԼԵԱԼ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Կ'ԸՍԵՆ ՊԼԻՔՍ ԵՒ ՊԱՐԱՏԻ

Իրաքի ապագինման գործընթացին հսկող ՄԱԿի գլխաւոր քննիչ Հանս Պիլքս եւ Մոհամէտ Պարատի երէկ Պաղտատ ժամանեցին հանդիպում ունենալու համար իրաքի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ, որոնցմէ պիտի պահանջեն յաւելեալ գործակցութիւն: Պիլքս եւ Պարատի հանդիպում ունեցան նախագահական խորհրդատու Ամէր Սաատիի, ՄԱԿի մէջ Իրաքի դեսպան Մոհամէտ Տուրիի եւ այլ պատասխանատուներու հետ:

Հանդիպումին սկսեց առաջ, Պիլքս եւ Պարատի վերստին շեշտեցին, որ Իրաքի դէմ պատերազմը անխուսափելի չէ, եւ թէ աւելի մեծ գործակցութեամբ կարելի է լուծուածի մը յանգիլ: Պիլքս ըսեւ նաեւ, որ Պաղտատ հասնելէ առաջ քանի մը մայրաքաղաքը:



Անգարայի մէջ թուրք ամբոյս մը բողոքի ցոյց կատարեց Մ. Նահանգներու դէմ ներ այցելած են ու սակայն կը պահանջէ կայացնեն ընդհանուր խորհրդակցած անոնց Իրաքի ամրոցական արժեւորումը Իրաքի մէջ գործակցութիւնը: Պիլքս ցարդ կատարուած եւ Պարատի Յունուար քննութիւններուն: Ներ- 27ին Ապահովութեան Խորհուրդին պիտի ներ- Ծար.ը՝ էջ 10

## ՓՈՒՆԿԵԱՆԿ ԿԸ ՄԵՐԺԷ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԻԳԵՐՆ ՈՒ ՍԻԶԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիւսիսային Քորէա երէկ մերժած է ընդունելու ներկայիս տեղի ունեցող դիւանագիտական միջապային ճիգերը, որոնք կը նպատակադրեն վերջ տալ ծայր տուած կորիպային տագնապին՝ յայտնելով, որ միայն Մ. Նահանգներու հետ պիտի բանակցի:

Փոնկեանկ յայտնած է, թէ պիտի չարտօնէ, որ Մ. Նահանգներ «միջապայականացնեն» բանակէրը եւ յատկապէս, ըսած է անիկա, ՄԱԿ պէտք չէ միջամտէ՝ տագնապին լուծում մը գտնել փորձելով:

Այս արտայայտութիւնները տեղի կ'ունենան ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ Նիւ Եորքի մէջ հարցին ընդհանուր օր մը առաջ եւ օր մը ետք՝ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի յատուկ պատուիրակ Մօրիս Սթրոնկի Փոնկեանկի չորսօրեայ այցելութեան մը ատարտէն ետք:

Մինչ այդ, Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Լիքսանտր Լուիուքով երէկ յայտնած է, որ կորիպային տագնապին վերջ տալու նպատակով Մոսկուայի առաջարկները փոխանցած է Փոնկեանկի, եւ թէ այս վերջինին պատասխանը այսօր (Երկուշաբթի օր) պիտի յատկանայ:

Միւս կողմէ, Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար ճոն Պոլթըն երէկ Պեյճիկ հասած է՝ Հիւսիսային Քորէայի առաջնորդ տագնապին ընդհանուր համար:

Ան մէկն է ամերիկացի շարք մը պաշտօնատարներու, որոնք անցնող քանի մը օրերուն Չինաստան այցելած են՝ Հիւսիսային Քորէայի ամէնէն սերտ դաշնակիցին հետ խորհրդակցութիւններու համար:

(ԱՅՓ)

## ՇԱՐՈՆ ՀԱՍՏԱՏ ԿԸ ՄՆԱՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԷՍԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԻՐ ԿԵՑՈՒԱԾՔԻՆ ՎՐԱՅ

Պաղտատի ցինցիներ ընդվզած են Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի դէմ, որ կը մերժէ միջազգային հովանաւորութիւն վախճող խաղաղութեան քարտէսը: Պաղտատի ցինցի պաշտօնատարներ կոչ ուղղեցին միջազգային ընտանիքին՝ դատապարտելու Շարոնի յայտարարութիւնը:

Շարոն ամերիկեան «Նիուզուիք» շաբաթաթերթին կողմէ հրապարակուած հարցազրոյցի մը մէջ ըսած էր, թէ Միջին Արեւելքի խաղաղութեան քարտէսը, որ կը խմբէ ՄԱԿը, Եւրոպական Միութիւնը, Ռուսիան եւ Միացեալ Նահանգները, կարեւորութիւն չի ներկայացնեն, եւ թէ անոր ծրագիրը գործադրութեան պիտի չզրուի, որովհետեւ այլ ծրագիր մը կայ իրագործութիւնը: «Քառակող ոչինչ է, զայն լրջութեամբ մի աննչք», ըսած էր Շարոն:

Պաղտատի ցինցի գլխաւոր բանազնաց Սաէպ Ուրայ-թաթ հակադարձեց, յայ-

տարարելով, որ Շարոնի առաջարկածը նոր ծրագիր մը չէ, այլ՝ պաղտատի նախնային շրջաններու վերագրուածն է: Ուրայ-թաթ ըսեւ, որ Շարոն պաշտօնապէս յայտարարեց Իսրայէլի մերժումը քառակող ծրագիրին, զոր պիտի գնէ Միջին եւ Թեւեռի թղթածրարներուն կողմէն: Ուրայթաթ

միջազգային ընտանիքէն եւ Միացեալ Նահանգներէն պահանջեց յայտարարել իրենց կեցուածքը Շարոնի մերժումին հանդէպ: Ան աւելցուց, որ Շարոն «խաբած էր» քառակող, համոզելով անոր անդամները, որ վերջնական ծրագիրը

Ծար.ը՝ էջ 10

## ՏԷՅՎԻՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ

Լեռնային Ղարաբաղի տագնապին մասին Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի վեկուցող Թերի Տէյվիս տագնապի գոտի պիտի այցելէ Հայաստանի նախագահական ընտրութիւններէն ետք:

Հայաստանի Ազգային Ժողովի մամլոյ ծառայութիւնը տեղեկացուց, որ որոշումը տրուած է վեհաժողովի քաղաքական յանձնաժողովի 15 Յունուարի նիստի ընթացքին:

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին մէջ Հայաստանի պատուիրակութեան ղեկավար Յովհաննէս Յովհաննիսեան յայտարարեց, որ Տէյվիս պիտի տայ ծանօթացման այցելութիւն մը:

Շուկանաւորութեամբ՝  
Խորհրդարանի փոխ նախագահ

### ԷԼԻ ՖԵՐՉԼԻԻ

«ITALIA FILM» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ  
Շ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՍԱՐՄԻՆԸ

Կը կազմակերպեն

### ԱԹՈՍ ԷԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ» Ֆիլմի

ցուցադրութեան պաշտօնական բացումը Լիբանանի մէջ:

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 21 Յունուար 2003, երեկոյեան ժամը 7:30ին, Planet Abraj սրահին մէջ, Center Abraj:

Մուտքը՝ հրաւիրատոմսով

Ծանօթ.- ԸՐԱԿՐԱՏՈՍՍԵՐԸ ՓՈՒՆԱՑԵԼԻ ԳՆ

## ՓԵՏՐՈՒԱՐ 1ԷՆ ՍԿՍԵԱԼ

ԱՖՀԻԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ Կ'ՕԳՏՈՒՐՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՅԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵՆԷՆ ՍՏԱՆԱԼՈՎ 12 ԱՌ-ՀԱՐԻՐ ԶԵՂԶ:

ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՆԿԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԶԱՅՆԵԼ ԱՖՀԻԼԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ 01/242556, 01/242557

ԱՖՀԻԼ - ՊՈՒՐՃ ԸԱՄՈՒՏ, ԱՖԵՏԻ ԶԵՆՔ, Բ. ՅԱՐԿ

### ՀԱՐԻՐԻ - ՔԵՐՏԱՀԻ ՍՈՒՐ ԲԱՆԱՎԷՃ

Վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ հաղորդակցութեան միջոցներու հարցերու նախարար Ժան Լուի Քերտահի միջեւ անցեալ շաբաթավերջին սուր բնոյթ ստացաւ ընդհանրական հեռաձայնի մարզի ապապետականացման շուրջ բանավեճը:

Վարչապետ Հարիրիի «Մուսքաբլայ» օրաթերթը հրատարակեց թիւեր, որոնք ցուցանել են, թէ կառավարութիւնը ինչ անցեալ վնասած է ընդհանրական մարզին պատճառով, իսկ Քերտահի տեղեկատուական գրասենեակը անմիջապէս պատասխանեց՝ յայտնելով, որ ամսական միջին մուտքը, որ կառավարութեան կ'ապահովուի նշեալ մարզէն, 41 միլիոն տոլար է:

«Մուսքաբլայ» օրաթերթին պատասխանը եղաւ այն, թէ պետութիւնը ամսական 2 միլիոն տոլար պիտի վնասէ եւ ոչ թէ հարիւր հազար տոլար, տակաւին զանց առնելով միջազգային հեռախօսութիւնը եւ լուստիլայ արժէքի տուրքը:

Քերտահի տեղեկատուական գրասենեակը հրատարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ յայտնեց, թէ «Մուսքաբլայ» թերթին հրատարակած գումարները անճիշտ են եւ ուղղուած են հաղորդակցութեան հարցերու նախարարութեան եւ նպատակ ունին ընդհանուր կարծիքը համոզել, որ հաղորդակցութեան նախարարութեան տարեկան պաշտօնական տեղեկագիրները ընդհանրական մարզէն եղած մուտքերուն եւ պետութեան շահերուն շուրջ, անճիշտ են:

Հաղորդագրութեան համաձայն, օրաթերթին հրատարակած բոլոր թիւերը սխալ են: Անոնց հիմնական նպատակն է կասկածներ տարածել եւ ներդրումներ կատարողներու վրայ ժխտական ազդեցութիւններ ունենալ:

Միւս կողմէ, ելեմուտքի նախարար Ֆուադ Սիւնիորա, ակնարկելով ընդհանրական հեռաձայնի շուրջ ծախսերը՝ էջ 10

### ԼԻԲԱՆԱՆ - ՔՈՒԷՅԹ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հանրօրոշ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեփթի Միքաթի երկու վերադարձաւ Պէյրութ, Քուէյթ կատարած իր երկօրեայ պաշտօնական այցելութենէն ետք:

Միքաթի Քուէյթի մէջ հանդիպում ունեցաւ խորհրդարանի նախագահ Ժան Լուի Քերտահի հետ: Քննարկուեցան Լիբանան - Քուէյթ երկկողմանի յարաբերութիւնները, յատկապէս խորհրդարանական աշխատանքներու ծիրին մէջ, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազգային մտանդները, որոնք վարչապետին արարական աշխարհին:

Միքաթի այցելեց Քուէյթի նախարարաց խորհուրդին կեդրոնը, ուր ծանօթացաւ նոր ստեղծուած համակարգչային կեդրոնի աշխատանքին դրութեան:

Միքաթի Քուէյթի մէջ Լիբանանի դեսպան իսլամ ֆիլանթիի հետ քննարկեց Լիբանանեան քաղաքական կեանքին առնչուած հարցեր եւ «Փարիզ - 2» ժողովէն ետք Լիբանանի եւ արաբական աշխարհին մէջ կատարուած փոփոխութիւններն ու արձանագրուած նուաճումները:

**ԲԱՆՏԱՒՈՐՈՒՄԾ**  
Ազգային վարժարաններու տարուան առիթով, Ազգային առաջնորդարանի կազմակերպած վիճակահանութեան բախտաւոր տոմսն է պետական վիճակահանութեան Հինգաբթի, 16 Յունուար 2003ի վիճակազոյգման մեծ պարգևին վերջին երեք թիւերը կրող տոմսը՝ **A 145**:  
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ**  
Սոյն ձեռնարկին հետեւեալ միութիւնը կը ստանձնէ օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար:  
Մարաշի հայրենակցական միութիւն, Մարաշի աղէտին 83րդ տարելիցին առիթով, մարաշցի հին ու նոր ցնջեցեալ հայրենակիցներուն հոգիներուն յիշատակին՝ 20 Յունուար:

**VICTORINOX**  
Equipping People for Life's Adventures  
Equipping People for Life's Adventures  
Chizzo Range, Pocket Tools, Swiss Army, Awimeter, Swiss Army, High Precision Watches  
Fore of Chabok, Dimosias street, Ghazir Mh, Tel: 01/290195 - 298035, Fax: 01/290263, e-mail: kuytr@dim.net.lb

### ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑԱՒ ՍՈՒՐԻՈՅ ՓՈՒՆ ՆԱԽԱԳԱՐԻՆ ՇԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ուղղութեամբ Դամասկոս, ուր հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Նատտափի հետ:

Վարչապետ Հարիրի յայտնեց, որ «Նախար» օրաթերթին հրատարակած լուրը, թէ՛ ինք զղջած եւ ընդունած է, թէ՛ ընդհանրական մարզի ապապետականացման ծրագիրները մերժելը սխալ մըն էր, անճիշտ է չեղտելով, որ ինք բազմաթիւ առիթներու թէ՛ խորհրդարանին եւ թէ՛ խորհրդարանի նախագահ Ռաֆիք Հարիրիի հետ հանդիպումներու ընթացքին:

Մորիս Ֆատէլ, Մոհամէտ Ապտէլ Լաթիֆ Քապպա-րա եւ Մոհամէտ Սաֆա-տի: Հանդիպումին քննարկուեցան զանազան հարցեր:  
Վարչապետ Հարիրի հեռաձայնային հաղորդակցութիւններ ստացաւ Սէուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալայէն, Եմէնի նախագահ Ալի Ապտալայ Սալէհէն եւ Սէուտական Արաբիոյ պաշտպանութեան նախարար Սուլեյման Պըն Ապտէլազիզէն:

### ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԸ ՊԷՏՔԷ ՀԱՄԱԽՄԲՈՒԻՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՉ

Երեսփոխան Ասէմ Քանսո երէկ յայտնեց, որ երկիրը պէտք ունի կառուցութեան եւ իշխանութեան պետերուն միջեւ հասկացողութեան, յատկապէս ներքին եւ արտաքին մարտահրաւէրներու ժամանակաշրջանի մը ընթացքին:  
Քանսո նկատել տուաւ, որ սահմանադրական որեւէ խախտում անհրաժեշտ է, որ քննարկուի խորհրդարանին մէջ, որովհետեւ խորհրդարանն է նշեալ խախտումներու քննարկման իտէլի վայրը:  
Ակնարկելով Պապատայի հանդիպումին՝

Քանսո յոյս յայտնեց, որ նախագահ զօր. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հանդիպումը կ'ըլլայ վերջնական հասկացողութեան մը եւ բոլոր հարցերուն ու վեճերուն շուրջ միացեալ կեցուածքի մը եւ սկզբունքային հասկացողութեան մը սկիզբը, որուն հիմամբ կը փրկուի երկրին տնտեսական կայունութիւնը եւ կը փարատի լիբանանցի ժողովուրդին մտահոգութիւնը:  
Քանսո անդրադարձաւ նաեւ շրջանային կառուցութեան՝ յիշելով Իրաքի պայթեցուցիկ վիճակը եւ արձանագրուող ժխտա-

կան զարգացումները: Քանսո դիտել տուաւ նաեւ, որ Լիբանան փոխանակ ուժասպառ դարձնելու ինքզինքը ներքին թրիմացութիւններու պատճառով, պէտք է հետեւի Սուրիոյ օրինակին եւ զօրակցի Իրաքին ու ամբողջ աշխարհին դէմ ցոյցերու դիմէ՝ վերջ տալու համար Իրաքի դէմ պատերազմի հաւանականութեան:  
Քանսո ընդգծեց, որ լիբանանցի ժողովուրդը կարիք ունի համախմբուելու կառավարութեան եւ պետութեան շուրջ եւ հրաժարելու ներքին պառակտումներու շուրջ բանավեճերէն, որովհետեւ տակաւին գոյութիւն ունի 2003ի պետական պիւտձի նախագիծը, որ կը կարծի խորհրդարանին վաւերացման:  
Քանսո յոյս յայտնեց, որ նախագիծը կը վաւերացուի:  
Քանսո շեշտեց, որ եթէ յառաջիկայ կառավարութիւնը ներկայէն աւելի աշխուժ պիտի ըլլայ եւ պիտի ունենայ անդամներ, որոնք յաւելեալ ջանքեր ի գործ պիտի դնեն, ապա ինք համաձայն է այդ փոփոխութեան:

### ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՍՕՐ Կ'ԱՅՅԵԼԷ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայկազեան համալսարանին մէջ այսօր կէսօրուան ժամը 11:00-էն 12:00 պիտի կայանայ խորհրդակցական հանդիպում մը, որուն ընթացքին կրթութեան նախարար Ապտէլ Ռահիմ Մորատ համալսարանին պատասխանատուներուն հետ պիտի քննարկէ Հայկազեան համալսարանին կրթական ծրագրին կապուած հարցեր:  
Կրթութեան նախարար սպա պիտի այցելէ համալսարանին կենսաբանութեան, քիմիադիտութեան եւ բնագիտութեան տարրալուծարանները, ինչպէս նաեւ տարբեր սրահներն ու զբոսայգիները:

Քանսո ընդգծեց, որ լիբանանցի ժողովուրդը կարիք ունի համախմբուելու կառավարութեան եւ պետութեան շուրջ եւ հրաժարելու ներքին պառակտումներու շուրջ բանավեճերէն, որովհետեւ տակաւին գոյութիւն ունի 2003ի պետական պիւտձի նախագիծը, որ կը կարծի խորհրդարանին վաւերացման:  
Քանսո յոյս յայտնեց, որ նախագիծը կը վաւերացուի:  
Քանսո շեշտեց, որ եթէ յառաջիկայ կառավարութիւնը ներկայէն աւելի աշխուժ պիտի ըլլայ եւ պիտի ունենայ անդամներ, որոնք յաւելեալ ջանքեր ի գործ պիտի դնեն, ապա ինք համաձայն է այդ փոփոխութեան:

Քանսո ընդգծեց, որ լիբանանցի ժողովուրդը կարիք ունի համախմբուելու կառավարութեան եւ պետութեան շուրջ եւ հրաժարելու ներքին պառակտումներու շուրջ բանավեճերէն, որովհետեւ տակաւին գոյութիւն ունի 2003ի պետական պիւտձի նախագիծը, որ կը կարծի խորհրդարանին վաւերացման:  
Քանսո յոյս յայտնեց, որ նախագիծը կը վաւերացուի:  
Քանսո շեշտեց, որ եթէ յառաջիկայ կառավարութիւնը ներկայէն աւելի աշխուժ պիտի ըլլայ եւ պիտի ունենայ անդամներ, որոնք յաւելեալ ջանքեր ի գործ պիտի դնեն, ապա ինք համաձայն է այդ փոփոխութեան:

Հովանաւորութեամբ  
**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ**  
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ  
**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**  
Կը ներկայացնէ՝  
  
**«ԿՈՍԻՏԱՍ» ԲԱՆԵԱԿԷ**  
Շաբաթ, 1 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»-ին մէջ:  
Տոմսերը սրանալ Գրաքուն Նարեկացիէն, Համազգայինի գրախանութէն, «Լ. Շալո» կեդրոնէն եւ կամ հեռախոսայինով 01/258300 քիմին:

**ԱՎԵԱՐԿ**  
**ԹՈՒՐՔԸ ՎԿԱՅԵՑ...**  
Ամբողջ պատմութիւնը հետեւեալն է:  
Անցեալ շաբաթ պատկերասփիւռի թրքական «Ա. Թէ. Վէ.» կայանին «Էսրա ճէյհան» մը յայտագիրէն 95ամեայ չեթ «հերոսուհի» մը պատմեց իր յուշերը, որոնց մէջ յատկանշականը եղաւ հայերու վերաբերող բաժինը:  
Այս կիւր իր երիտասարդութեան օրերուն լծուել է հայերը իսլամացնելու աշխատանքին: «Երբ հայերը մերժէին միւսիման ըլլալու մեր խորհուրդն ու խրատները, պանոնք լաւ մը կը ծեծէինք եւ ապա մեր գիւղին մասագործը պանոնք կը մորթէր», ըսաւ պատաւը ամենայն պաղարիւնութեամբ:  
\* \* \*  
Հայկական Յեղասպանութեան իսկական ահաբեկութիւնը երբեք կարելի պիտի չըլլայ պզալ: Ասիկա շատ բնական է, որովհետեւ որքան ալ կարողացուի, լսուի ու խօսուի անոր մասին, այդ սարսափն ու դժոխքը ճաշակած վերապրածները միայն կը պզալին թուրքին անմարդկային ոճիրին տարողութիւնը, եւ հիմա երբ անոնք ալ չկան, յատկապէս նոր սերունդը, չի կրնար պզալ, ըմբռնել, եւ ապրիլ Հայկական Յեղասպանութենէն վերապրածներուն ցաւն ու տառապանքը:  
1970ական թուականներուն Սփիւռքի տարածքին գործող Հայ Դատի յանձնախումբէրը, նաեւ անհատներ, իմաստութիւն ունեցան ձայնագրելու եւ նկարելու վերապրողներուն վկայութիւնները, որոնք յաճախ կը թուին երեւակայական. պանոնք լսողին առաջին հակապոզիցիոնները կ'ըլլայ. «Այսքա՛ն գազանային կիրք ու անմարդկային ոճիր»:  
Երանի նախապատրաստուած ըլլայինք ու ձայնագրէինք տիրապետչակ Հայիպէ Հանրը ինքեցնող թուրք կնոջ վկայութիւնը, ու պայն կցելով հայ վերապրողներուն վկայութիւններուն՝ սեփականութիւնը դարձնէինք մեր նորահաս սերունդներուն:  
Այս մատնանշումը ուղեցի ընել, որովհետեւ աշակերտ մը դասարանին մէջ հարց տուաւ. «Բայց պարո՛ն, այս բոլոր եղածները մեր պատմածներն են. իրենք՝ թուրքերը բան մը չեն րսեր, մենք մեր պատմածները կը լսենք ու կը հաւատանք. կ'ուզեմ լսել թուրքը, ան ի՞նչ կ'ըսէ»:  
Այս աշակերտին հարցումին պատասխանը պատմագիտական այնքան լայն փաստերը չէին, ոչ ալ այն իրաւացի իրողութիւնները՝ Հայկական Յեղասպանութեան մասին: Ան եւ իր դասընկերները անգիտակցաբար կը տառապէին ու կ'ուզէին լսել թեկուպ մէկ վկայութիւն՝ թուրքէ մը:  
Ահա այն կնոջ վկայութիւնը ճիշդ ուղւածն էր...  
... Մայրս կը պատմէր, որ մեծ հայրս ահ ու սարսափի կը մատնուի եղէր, ամէն անգամ որ փողոցը, իրենց տան առջեւ կոխ ըլլար: «Ներս մոտէ՛ք, պահուրտեցէ՛ք թուրքերը կը յարձակին», կը պոռայ ու սենեակ մը կը պահուրտի եղէր: Ու անմիջապէս մեկ կը սաստեր, որ չխնդանք:  
Այդ օրերուն չէի կրնար ինդուքս զսպել՝ երեւակայելով մեծ հորս խուճապաւոր վիճակը: Մանաւանդ չէի հասկնար, թէ թուրքը ինչ գործ ունէր մեր հայկական ապստով թաղերուն մէջ...  
... Միւսիմանութիւնը մերժող հայերը մագործին յանձնող թուրք կնոջ շնական վկայութիւնը լսելէս ետք, մեծ հորս վստիս ու պարհուրանքը հասկցայ: Քիչ մը:  
**Ա. ԱՊՏԱԼԵԱՆ**

**ԳՐԱՒՈՒՄԾ ՕՐ**  
**ՇԹԷ**  
**Շ.Մ.Ը.Ս. ԱՆԹՈՒԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻՂ**  
1 ՄԱՐՏ 2003  
●Գործ կը փնտնէք  
●Գործաւոր կ'ուզէք  
**ԴԻՍԵՅԷ**  
Շեռ. 03-963499:  
**ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**  
●Արուեսակ Կարապետեանի մահուան առիթով, ԼՕՍԻ «Նայիրի» մասնաձիւղին եղած եւ հետեւեալ նուիրատուութիւնները:  
Տիկին Սեդա Պարսամեան 50 տոլար, տըր եւ տիկին Յարութիւն Արթիսեան 20,000 լիբ. սուկի, տըր եւ տիկին Կարո Զահիդեան 20,000 լիբ. սուկի, տըր եւ տիկին Յարութիւն Լիպարեան 20,000 լիբ. սուկի, տիկին Մատեն Լամբեան 50,000 լիբ. սուկի եւ տիկին Արշալոյս Տիգրեան 15,000 լիբ. սուկի:  
**ԿՈՒՉՈՒԻՆ**  
●Ամերիկեան էր քոն-տիքթի ընկերութիւն մը (Արեւմտեան Պէյրութ) կարիք ունի քարտուղարուհի մը՝ 3 տարուան փորձառութեամբ. անգլերէն/արաբերէն լեզուով հասկարգիչ գիտնալը պայման: Շեռ. 03-816189 կամ 01-369052 երեկոյեան:  
●Նաեւ կ'ուզուի փորձառու թեքնիկներ տրքոնտիքթի գետեղողներ եւ նորագողներ:  
BT ունեցնող նախընտրելի է:  
Շեռ. 01-378801-5 կամ 03-800601  
FAX: 01-378800:  
**ԿՈՒՉՈՒԻՆ**  
●Հողեր. Աճիկիկափ. Նաքքաշի եւ Զորնէք Զահուանի մէջ՝ ծովափայտեց դիրքով: Շեռ. 03-886646:  
**ԾԱԽՈՒՎԻԼԼԱ**  
●Զորնէք Զահուանի շրջան: Շեռ. 03-886646:

Banque Audi BYCOP GARDEN TOWER 3011-8016 Antelias - Beirut Tel: 04 417741 Fax: 04 417741 http://www.gardentower.com.lb GULBENG CORP. NIVEA VISAGE

ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՀԱԲԱՔԱԿԱՆ ԱՂՕԹԵ ԱՆԹԼԻԱՍԻ ՄԵՋ

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ԶՕՐԱԻՈՐ ՄԻՈՒԹԵԱՄԲ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՉԱՅՆՆ Է ԱՇԽԱՐՀԻ ՄԷՉ»

ԸՍԱԲ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարին մէջ երէկ երեկոյան տեղի ունեցաւ միջկեղեցական արարողութիւն, մասնակցութեամբ Լիբանանի քրիստոնեայ բոլոր համայնքներուն:

Անթիլիասի մայրավանքը ժամանած քրիստոնեայ տարբեր համայնքներու պատրիարքները եւ հոգեւոր առաջնորդները վեհարանի դահլիճին մէջ ընդունուեցան Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին կողմէ: Երեկոյան ժամը 5:00ին, վեհափառ հայրապետին գլխավորութեամբ պատրիարքներու, առաջնորդներու եւ եպիսկոպոսաց թափօրը զանգերու ղոջանջին ներքեւ ուղղուեցաւ դէպի Մայր տաճար, ուր զանազան համայնքներու հաւատացեալներ միախումբ կը սպասէին, իրենց աղօթքներով ձայնակից դառնալու իրենց հոգեւոր պետերուն քրիստոնեական եկեղեցւոյ միութեան ի խնդիր:



Աղօթքի պահուն

Եկեղեցական արարողութեան ընթացքին Արամ Ա. վեհափառը հայրապետական պատգամով ողջունեց համաքրիստոնեական այս շարժումը, որ Արեւելքի ու Արեւմուտքի քրիստոնեաները, ինչպէս նաեւ եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի անդամ բոլոր եկեղեցիները հոգեպէս իրարու կամրջող երեւոյթ մը սկսած է դառնալ ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան վերջին շրջանին: Ան ողջունեց նաեւ հոգեւոր պետերուն ներկայութիւնը Անթիլիասի Մայր տաճարին մէջ: Ապա, նորին սրբութիւնը քրիստոնեական եկեղեցիներու բարոյական հեղինակութեան ու այսօրուան կեանքին մէջ ազդու գործունէութեան համար անժամանցելի նկատեց սերտ գործակցութիւնն ու անխախտելի միութիւնը. «որովհետեւ Քրիստոսահիմն եկեղեցին իրբեւ մէկ ամբողջութիւն հաստատուած է Քրիստոս - ժայռին վրայ, եւ «դժոխքի դռներն անգամ պիտի չկարենան յարձակարել զայն» (Մտ 16:18): Երբ աշխարհ անսպասելի փոփոխութիւններով ու քաղաքական, բարոյական թէ ընկերային կեանքի յանկարծական վերլվարումներով լեցուն օրեր կը մատուցէ մարդկութեան, ամէն ժամանակէ աւելի այժօր պէտք է քրիստոնեական եկեղեցին ցոյց տայ իր շօշափելի միութիւնը ի խնդիր արդարութեան ու խաղաղութեան հաստատման: Եկեղեցին Աստուծոյ ձայնն է, արդարութեան ու խաղաղութեան ձայնը:

Նրա այս կեանքին մէջ: Անիկա խորհրդական ներկայութիւնն է Քրիստոսի, որուն ճամբով մարդուն փրկութիւնը իրագործուեցաւ այս աշխարհին մէջ», ըսաւ վեհափառ հայրապետը:

Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին կողմէ արարեղծ լեզուով պատրաստուած եկեղեցական արարողութեան յատուկ գրքոյկի մը հետեւողութեամբ, հաւատացեալներու ներկայ բազմութիւնը կատարեց սաղմոսներու ու մաղթանքներու փոխասցութիւնները, իսկ չորս տարբեր համայնքներու երգչախումբեր հոգեւոր երգերով ու շարականներով ելոյթ ունեցան: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի սաները եւս եռաձայն կատարումով մասնակից դարձան՝ շարականներու երգեցողութեամբ:

Նշեք, որ Քրիստոնեայ աշխարհը տարիներէ ի վեր որդեգրած է տարուան առաջին ամսուան երրորդ շաբաթը եկեղեցիներու միութեան համար աղօթք բարձրացնել առ Աստուած: Նոյն ականջութեան հիման վրայ, Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին կազմակերպութեամբ Լիբանանի մէջ եւս տարիներէ ի վեր կը կատարուի քրիստոնեական եկեղեցիներու միութեան աղօթքը, քրիստոնեայ զանազան եկեղեցիներու կեդրոններուն մէջ:

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԴԱՍԱԴՈՒՆ

Պետական վարժարաններու պայմանագիրով աշխատող ուսուցիչները երէկ վերահաստատեցին, որ յառաջիկայ Չորեքշաբթի, 29 Յունուարին պիտի գործադրեն դասադուլ մը իբրեւ բողոք իրենց իրաւունքներուն հաստատման հանդէպ ցուցաբերուած անարդարութեան եւ անտեսումին դէմ:

Նշեալ որոշումը տրուեցաւ պայմանագիրով աշխատող պետական վարժարաններու ուսուցիչներու գերագոյն խորհուրդին գումարած ժողովէն ետք:

Շաբ-ը՝ էջ 10

**VICTORINOX**

Equipping People for Life's Adventures

Classic Range, Pocket Tools, Swiss Tool, Altimeter, SwissChemo, High Precision Watches

Furn of Châtillon, Domancy street, Grenchen M.G. Tel:01/290195 - 288035, Fax: 01/290363, e-mail: keytr@dm.net.li

## ԱՆԹԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՈՎ 2003Ը «ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐԻ» ՀՈՉԱԿՈՒԵՑԱՒ

Անթիլիասի Մայր տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին երէկ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին հայրապետական պատգամը ընթերցեց Զարեհ արք. Ազնաւորեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովը, նախագահութեամբ վեհափառ հայրապետին, որոշած էր մեր ժողովուրդի կեանքին վրայ ազդեցութիւն ունեցող զանազան երեւոյթները, կարեւոր իրադարձութիւնները եւ արժեքները լուսարձակի տակ բերել՝ ամբողջ տարուան մը նշանաբանը դարձնելով զայն: Արամ Ա. կաթողիկոս՝ մեկնելով «մեր քրիստոնեական ինքնութիւնը խաթարող ու բարոյական արժեքները եւ ըմբռնումները նսեմացնող ներկայ աշխարհի հոսանքներէն», մեր ժողովուրդի կեանքին ներս Աստուածաշունչին տեղն ու դերը վերաբերեւորելու եւ անով հոգեւոր ու բարոյական դաստիարակութիւն ջանքերու նպատակով, 2003 տարին հուշակեց «Աստուածաշունչի տարի»:

### ՍՖէՅՐ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ԳՈՐԾԱԴՈՒՆԵՐՆ ՈՒ ԴԱՍԱԴՈՒՆԵՐԸ

Մարտիններու Նասրալա Պուլթրոս Սֆէյր պատրիարք Կիրակի օրուան իր պատգամին մէջ շեշտեց քաղաքացիներուն միջեւ արդարութեան եւ հաւասարութեան անհրաժեշտութիւնը՝ նկատել տալով, որ աշխատակողական կամ ուսուցչական բողոքի գործադուլներն ու դասադուլները իրաւացի են:

Սֆէյր պատրիարք յայտարարեց, որ յառաջիկայ շաբաթ բոլոր քրիստոնեաներու միասնակամութեան աղօթքի շաբաթն է եւ կող ուղղեց բոլորին՝ ներկայ գտնուելու պատարագներուն:

السيرة النبوية  
السيرة النبوية  
السيرة النبوية  
السيرة النبوية  
السيرة النبوية

Տեղական մամուլը իր 18 եւ 19 Յունուարի թիւերով լուսարձակի տակ առած է նախագահ Լախուտի եւ վարչապետ Հարիրիի հանդիպումը ու Միացեալ Նահանգներու եւ այլ երկիրներու մէջ իրաքեան պատերազմին դէմ կայացած բողոքի ցոյցերը:

«Նահար» իր երէկւան թիւով գրած է. «Պատարայի հանդիպումը՝ Կիրակի օր եւ Կոր. Լախուտ եւ Հարիրի կը սպասեն, թէ ինչ պիտի ըլլայ միւսին արձարձելիք հարցերը»:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Կիրակի օրուան հանդիպումին լուսնի տակ, երեսփոխաններ այցելեցին նախագահ Լախուտի: Հանդարտութիւն մեծ հարցերը եւ իրադարձութիւնները դիմաւորելու համար, նշած է թերթը:

«Պայրաք» լուսարձակի տակ առած է նախագահ Լախուտի այն յայտարարութիւնը, որ ան ըսած է, թէ պետութիւնը բարեացակամ պիտի չգտնուի պետական հաստատութիւններուն մէջ յայտնուած բացթողումներուն նկատմամբ:

Ըստ «Սաֆիր»-ի, բջիջայինի տագնապը կը վերանորոգուի եւ կ'աւելնայ չոր. Լախուտ - Հարիրի հանդիպումին օրակարգին:

### ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Յակոբ, Պերճ եւ Լորիս Պեքրեճեաններ եւ տիկին Պերճուհի Մարտեան եւ զաւակուր շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք ամձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեցող իրենց մօր եւ մեծ մօր՝ ԼՈՒԻՉԱ ՊԵՔՐԵՃԵԱՆԻ (ծնեալ ՄԱՍՍՈՒՏԵԱՆ) մահուան սուգին:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Վարուժան Սերայտարեանի մահուան առիթով տրեւ տիկին Յակոբ Մուշեղեան 20 տոյար «Ձուարթնոց» կեդրոնին:

Յարութիւն Չուարեանի մահուան առիթով «Ձուարթնոց» կեդրոնին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

- Տրեւ տիկին Յարութիւն Չուարեան 20,000 լ. ռ., Էշրեֆիէ՛ Կայ Աւետ. Կեդր. Բարձ. Կրթ. Ուսուցչական կազմ եւ պաշտօնընտրութիւն 50,000 լ. ռ., տրեւ տիկին Նազ Սիմոնեան 20,000 լ. ռ., տրեւ տիկին Կարպիս Գետեան 10,000 լ. ռ., տրեւ տիկին Գրիգոր Գետեան 10,000 լ. ռ., տրեւ տիկին Սարսկ Տեմիրճեան 50,000 լ. ռ., տրեւ տիկին Պաթ Սահակեան 50,000 լ. ռ., տրեւ տիկին Արա Սահակեան 50,000 լ. ռ., մի ըմբ 20,000 լ. ռ., տրեւ տիկին Կայկազ Եարտըմեան 50,000 լ. ռ., տրեւ տիկին Արա Գալիֆայեան 150 տոյար:

**ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ Բ. ՉԵՆԱՐԿ**

Կազմակերպութեամբ՝  
**ԱԶԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ԿԱՐԴԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԻՆ**

Նիւթ՝  
**«Ճէն 12 ՏԱՐԵԿԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒԻՆ ԿԱԶՄԱԻՈՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ ԵՒ ԴՉՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»**

Դասախօսուհի՝  
**ՇԱԼԻԿ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ - ԽՈՒՏԱՎԵՐՏԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 22 Յունուար 2003, առաւօտեան ժամը 10:00ին, Ազգ. Արգարեան կարճարանի սրահին մէջ:

**ԵՐԱՐԵՐ**

**IGOL MOTOR OIL**

**FUEL CARD**

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

# ՊԵՏՔ Է ՓԱՍՏԵԱ ՊԱՏԱՌԹԻՒՆԸ Կ'ԸՍԷ ԱԹՈՄ ԷԿՈՅԵԱՆ



Հինգշաբթի, 23 Յունուարին, լիբանանցի շարժապատկերի «Արաթ» եւ «Չուք» սրահներում մէջ կը սկսի ցուցադրութիւնը Աթոմ Էկոյեանի «Արաթ» ժապաւեցի: Ստորեւ կը ներկայացնենք յունական «Էլէֆթրոթիփիա» թերթին կողմէ բեմադրիչին հետ կատարուած շահեկան հարցազրոյց մը, որ հայերէնի թարգմանուած եւ լոյս տեսած է «Ազատ Օր» թերթին մէջ:



Հայագի բեմադրիչը երկու Էնցոն հարցազրոյց ունի ինչ որ տայ շարժապատկերի քննադատ Նիկո Ֆենէք Միքելիտի, որ լոյս տեսնուած յունական «Էլէֆթրոթիփիա» օրաթերթի «7+» գեղարուեստական յաւելումածի 12 Յունուար 2003ի կիրակնօրնայ թիւին մէջ:

Հայկական Յեղապանութեան հարցը կ'արծարծէ Աթոմ Էկոյեան իր «Արաթ» ժապաւեցի մէջ, որ այս Ուրբաթ, 17 Յունուարին ի վեր կը ներկայացուի նաեւ Յունաստանի մէջ:

ՀԱՐՅՈՒՄ.- Ի՞նչ է Յեղապանութեան դերը «Արաթ» ժապաւեցի մէջ:

ԱԹՈՄ ԷԿՈՅԵԱՆ.- Ուզեցի Յեղապանութեան հարցին մօտենալ արուեստի ճամբով, այն մտաւոր դերով, որ կրնայ արուեստը իր դերը խաղալ պայքարի մը գրեթե ընդմիջման մէջ, նպատակ մը ստանալով եւ հաստատելով ճամբայ մը որոնելով հայկական ջրաղբերու եղելութեամբ: Յեղապանութիւնը միայն մարդկային կեանքերէն, որ փճացուց, այլ մարդոց մէջ սպաննեց մարդկութիւնը: Այս ժապաւեցիով առիթ կը ստեղծեմ մերձեցնելու անցեալին, քննարկելու անցեալը, միաժամանակ շարժապատկերի բնագաւառին ընդմէջէն դրսեւորելով այնպիսի տիպարներ, որոնք կը նմանին մէկը միւսին՝ նպատակ ունենալով յայտնաբերել ճշմարտութիւնը եւ մարդկային կեանքին գերագոյն արժեքները:

Հ.- Ի՞նչ նպատակով 18 տարեկան տղայ մը ընտրեցիք այս եղելութիւնները պատմելու համար:

Ա.- Տղան կը հաւատայ, թէ իր պատմումը այնքան լաւ է, որ հանդարտ կերպով կը պատմէ, եւ իր պատմման ընդմէջէն նոյնի՛նքն պատմութիւնը ուժակապով թիւն կը ստանայ, ինչպէս՝ «Շեքսպիրի մէջ»:

Հ.- Այդ տղան դո՞ւն է:

Ա.- Է. Այո՛. շատեր հարց կու տան ինձի. շատ մօտ կը գգամ Բաֆֆին, որովհետեւ երբ 18 տարեկան էի, սկսած էի իմ ինքնութեան որոնումները յայտնաբերումը կատարել: Գիտէի թէ հայ եմ, սակայն հայկական միջավայրի մէջ չմեծցայ, որպէսզի կարենամ ուղղակի ճաննալ հայութեան վերաբերեալ հարցերը: Սոյն ժապաւեցիներ ինձի համար սքանչելի վերածնունդ մը հանդիսացաւ:

Հ.- Ի՞նչ նպատակով նախընտրեցիք այս պատմութիւնը դրսեւորել այսօրուան իրականութեան տուեալներուն ընդմէջէն:

